



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2025Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	7
3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ	10
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	12
5. ԱՄՓՈՓՈՒՄ	14

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2025թ. առաջին կիսամյակը համեմատաբար նպաստավոր էր համաշխարհային տնտեսության համար: Մասնավորապես, ՀՀ հիմնական գործընկեր երկրներում տնտեսական աճը շարունակել է մնալ դրական տիրույթում: Այնուամենայնիվ, մի շարք իրադարձություններ (ինչպիսիք են, օրինակ, Իսրայել-Իրան զինված հակամարտությունը, ԱՄՆ-ի առևտրային պատերազմը, լարվածությունը Գազայում և այլն) էապես ազդել են համաշխարհային տնտեսության զարգացման դինամիկայի վրա: Մասնավորապես, ԱՄՆ-ի կողմից մաքսատուրքերի բարձրացման սպասումները առաջին եռամսյակում որոշ երկրներում հանգեցրել են արտահանման կտրուկ աճի, ինչն էլ պայմանավորել է այդ երկրներում զուտ արտահանման ավելացումը և, վերջին հաշվով, տնտեսական աճի արագացումը: Երկրորդ եռամսյակում արդեն գործընկեր երկրներում աճը հիմնականում պայմանավորված է եղել այլ գործոններով՝ մասնավորապես, առևտրային պատերազմի «փխրուն հրադադարով», ծառայությունների ոլորտի աճով և արտադրական ոլորտի աստիճանական վերականգնմամբ:

Հայաստանի տնտեսության զարգացման դինամիկայի վրա ազդած հիմնական գործոններն այլ են: Ռուս-ուկրաինական զինված հակամարտության բարենպաստ ազդեցությունը զգալիորեն թուլացել է: Դրա հաշվին տնտեսական ակտիվությունը տարեսկզբին զգալիորեն դանդաղել էր: Այնուամենայնիվ, արդեն մարտ ամսից այն սկսել է կրկին արագանալ՝ հիմնականում պայմանավորված երկու հանգամանքով: Դրանցից առաջինը արդյունաբերության անկման տեմպի մեղմումն է՝ պայմանավորված բազայի էֆեկտով: Բարելավվումը շարունակում է պայմանավորված լինել բազայի էֆեկտով, քանի որ նախորդ տարվա նույն ամիսների ընթացքում նկատվում էր աճի տեմպի շարունակական դանդաղում (ոսկու վերաարտահանմամբ պայմանավորված): Երկրորդ հանգամանքն այն է, որ 2025-ի առաջին կիսամյակում զգալիորեն աճել են «ոչ արտահանելի» ճյուղերը, ինչպիսիք են ծառայությունները և շինարարությունը: **2025-ի առաջին կիսամյակում հենց այդ երկու ճյուղերն են ունեցել տնտեսական ակտիվության 6.3% աճին ամենամեծ նպաստումը՝ համապատասխանաբար 5.1 և 1.4 տոկոսային կետ):** Գյուղատնտեսության և առևտրի ճյուղերի նպաստումները շատ ավելի փոքր են եղել՝ 0.6-ական տոկոսային կետ: **Իսկ արդյունաբերության նպաստումը բացասական է՝ -2.1 տոկոսային կետ, քանի որ այն նախորդ տարվա վեց ամիսների համեմատ էականորեն՝ 12.1%-ով, նվազել է:** Ի դեպ, նախորդ տարվա առաջին կիսամյակում արդյունաբերությունը, ընդհակառակը, ունեցել էր չափազանց բարձր՝ 18.2% աճ:

Արդյունաբերության նվազումը գլխավորապես պայմանավորված է վերամշակման և վերաարտահանման նպատակով ներմուծված թանկարժեք

մետաղների ներմուծման գործոնի չեզոքացմամբ: Մասնավորապես, կտրուկ նվազում է արձանագրվել մշակող արդյունաբերությունում, որն ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստել է 13.6 տոկոսային կետով: **Ի դեպ, հարկ է նշել, որ մշակող արդյունաբերությունում նվազել են ոչ միայն «հիմնական մետաղների արտադրություն» և «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն» ենթաոլորտները (դրանց նվազման պատճառը վերոհիշյալ չեզոքացումն է): 2025թ. առաջին կիսամյակի արդյունքներով էական նվազումներ են գրանցվել նաև մշակող արդյունաբերության մի շարք կարևորագույն ենթաոլորտներում, մասնավորապես՝ «խմիչքների արտադրությունում», «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունում» և «հագուստի արտադրությունում»:**

Արդյունաբերության նվազմանը հիմնականում հակազդել է (1.3 տոկոսային կետով) «էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում» ենթաճյուղի աճը:

2025թ. առաջին կիսամյակում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության* համախառն արտադրանքն աճել է 7.3%-ով՝ պայմանավորված հիմնականում բուսաբուծության աճով (նպաստումը՝ 5.0 տոկոսային կետ): Անասնաբուծությունը, ձկնորսությունը և անտառային տնտեսությունը ևս աճել են՝ նպաստելով գյուղատնտեսության աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 1.6, 0.4 և 0.3 տոկոսային կետ):

Շինարարության ճյուղում գրանցված 18.5% աճը հիմնականում պայմանավորված է եղել կազմակերպությունների, բնակչության և պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճով (նպաստումները՝ համապատասխանաբար 10.6, 5.0 և 2.9 տոկոսային կետ):

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարության աճին հիմնականում նպաստել են անշարժ գույքի հետ կապված գործունեության (հիմնականում՝ բնակարանաշինության), ինչպես նաև կրթության ոլորտներում շինարարության ծավալների աճերը:

Ծառայություններն աճել են 9.8%-ով՝ հիմնականում պայմանավորված ֆինանսական և ապահովագրական գործունեության (մասնավորապես՝ բանկերի գործունեության), ինչպես նաև տեղեկատվություն և կապի (մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների) ենթաճյուղերի աճերով (նպաստումները՝ համապատասխանաբար 4.9 և 3.9 տոկոսային կետ): Ճյուղի աճի վրա բացասաբար է ազդել տրանսպորտի ենթաճյուղի նվազումը (բացասական նպաստումը՝ 1.3 տոկոսային կետ), որն իր հերթին պայմանավորված է եղել օդային և ցամաքային տրանսպորտով մատուցված ծառայությունների նվազմամբ:

Առևտրի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կտրուկ դանդաղել է՝ 2024-ի առաջին կիսամյակի 22.9%-ի համեմատ՝ 2025-ի նույն ժամանակահատվածում՝ 3.9%:

Ի տարբերություն գործընկեր երկրների, որոնք ունեցել էին արտահանման ծավալների աճ, Հայաստանում այն (նաև ներմուծման ծավալները) 2025թ. առաջին կիսամյակում կտրուկ նվազել է. դոլարային արտահայտությամբ արտահանումը նվազել է 52.8%-ով՝ կազմելով 3,756 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 38.6%-ով՝ կազմելով 5,913 մլն ԱՄՆ դոլար: Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման անկման միտումը սկսվել է դեռևս 2024թ. նոյեմբերից:

Քանի որ արտահանման ծավալների անկումն ավելի մեծ է եղել, քան ներմուծման ծավալներինը, արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2025թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ վատթարացել է 28.5%-ով և կազմել 2,157 մլն ԱՄՆ դոլար:

Հաշվետու ժամանակահատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ աճել է 5.6%-ով՝ կազմելով 294,621 դրամ: Աշխատավարձի աճին հիմնականում նպաստել է մեծածախ և մանրածախ առևտրի, կրթության, մշակող արդյունաբերության, ինչպես նաև շինարարության ոլորտներում աշխատավարձերի աճը: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը աճել է 4.8%-ով՝ կազմելով 221,362 դրամ, իսկ ոչ պետականում՝ 5.5%-ով, և կազմել է 323,223 դրամ:

Գնաճը 2025թ. առաջին կիսամյակի ընթացքում արագացել է՝ մոտենալով ԿԲ թիրախային միջակայքի վերին շեմին, ինչի արդյունքում ԿԲ-ն դադարել է մեղմացնել դրամավարկային քաղաքականությունը՝ փետրվարի 4-ին վերաֆինանսավորման տոկոսադրույքի 0.25 տոկոսային կետով նվազումից հետո հետագայում պահպանելով այն 6.75% մակարդակում: 12-ամսյա գնաճը հունիսին կազմել է 3.9%, միջին և բնականոն գնաճերը՝ 3.1-ական տոկոս:

Դրամավարկային պայմանների աստիճանական թուլացումը, որը հիմնականում տեղի է ունեցել նախորդ տարվա ընթացքում, հանգեցրել է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազմանը եկամտաբերության կորի կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածներում:

ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից արտերկիր կատարված առևտրային և ոչ առևտրային նպատակով զուտ փոխանցումները 2025թ. առաջին կիսամյակի դրությամբ կազմել են 587.6 մլն

դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրելով 1.3% անկում:

Այսպիսով, թյուր տպավորություն կարող է ստեղծվել, որ ՀՀ տնտեսությունը կարողանում է հաղթահարել ոսկերչական գործունեության ենթաճյուղի կտրուկ ավելացած ցուցանիշների (պայմանավորված արտածին անկայուն գործոններով) նույնքան կտրուկ նվազման արդյունքում ստեղծված բավական ծանր իրավիճակը: Մասնավորապես, այդպիսի տպավորության ձևավորմանը կարող է նպաստել նաև առաջին կիսամյակի տնտեսական աճի տեմպը՝ 5.6%: Իրականում, սակայն, հարկ է ընդգծել, որ 2025-ի առաջին կիսամյակում արձանագրված տնտեսական ակտիվության աճը հիմնականում ոսկու վերաարտահանման գործոնով պայմանավորված բազայի էֆեկտի գրեթե չեզոքացման և որոշ «ոչ արտահանելի» ճյուղերում արձանագրված դրական զարգացումների արդյունք է: Մինչդեռ, այնպիսի կարևոր «արտահանելի» ճյուղում, ինչպիսին արդյունաբերությունն է, արձանագրվել է չափազանց կտրուկ անկում: Փաստորեն, ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով առաջացած արտածին դրական գործոնների ազդեցությամբ ՀՀ տնտեսության «դեֆորմացիան», որի մասին նախկինում բազմիցս խոսվել է, պահպանվում է:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2025 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե փաստացի մուտք են եղել 1,433.1 մլրդ դրամի ընդհանուր եկամուտներ (Աղյուսակ 1): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանք 15.2%-ով կամ 189.4 մլրդ դրամով ավելի են, ինչը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների և այլ եկամուտների աճով: Առաջին կիսամյակի ճշտված պլանի համեմատ բյուջետային եկամուտների հավաքագրման կատարողականը կազմել է 102.2%:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	1,243.7	1,396.6	1,402.0	1,433.1	102.2
Հարկային եկամուտներ և պեղական տուրքեր	1,187.6	1,346.6	1,349.8	1,356.0	100.5
Պաշտոնական դրամաշնորհներ	4.2	4.7	5.1	3.6	70.6
Այլ եկամուտներ	51.9	45.4	47.1	73.5	156.1

Բյուջեի ընդհանուր եկամուտների ճնշող մասը՝ 99.7%-ը կամ 1,429.5 մլրդ դրամը, գոյացել է ներքին աղբյուրներից: Հաշվետու ժամանակահատվածում ստացվել են 3.6 մլրդ դրամ ընդհանուր գումարի պաշտոնական դրամաշնորհներ:

Պետական բյուջեի եկամուտների հիմնական մասը՝ 94.6%-ը կամ 1,356.0 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները և պետական տուրքերը (Աղյուսակ 2): Դրանք ճշտված պլանով ծրագրված մեծությունից՝ 1, 349.8 մլրդ դրամից, 0.5%-ով ավելի են: Իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմում է 14.2% կամ 168.4 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված ԱԱՀ-ի 25.1%, շահութահարկի 18.0% և եկամտային հարկի 9.3% աճով: Դրանց նպաստումը հարկային եկամուտների և պետական տուրքերի աճին կազմել է համապատասխանաբար 7.0, 3.7 և 2.5 տոկոսային կետ:

Աղյուսակ 2. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, մլրդ դրամ

	2024թ. առաջին կիսամյակի փաստացի	2025թ. առաջին կիսամյակի փաստացի	2025թ. առաջին կիսամյակը 2024թ. առաջին կիսամյակի նկատմամբ (%)
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,187.6	1,356.0	114.2
1. Հարկային եկամուտներ, այդ թվում՝	1,154.6	1,315.6	113.9
ԱԱՀ	328.7	411.4	125.1
Ակցիզային հարկ	55.5	66.9	120.6
Շահութահարկ	245.9	290.3	118.0
Մաքսատուրք	36.1	36.4	100.9
Եկամտային հարկ	320.6	350.3	109.3
Շրջանառության հարկ	28.3	35.4	125.0
Սոցիալական վճար (կուրակային կենսաթոշակի գծով)	50.7	57.6	113.5
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	49.6	29.7	59.9
Այլ հարկեր	39.1	37.5	96.1
2. Պետական տուրք	33.1	40.5	122.3

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի *Ավելացված արժեքի հարկը*՝ 30.3%, որը բացարձակ մեծությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 25.1%-ով կամ 82.7 մլրդ դրամով: Ընդ որում, ավելացել են ինչպես ՀՀ ում արտադրվող ապրանքների ու ծառայությունների շրջանառության, այնպես էլ ներմուծման գծով մուտքերը:

Եկամտային հարկի տեսակարար կշիռը հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր մեծության մեջ 25.8% է: Նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի համեմատ եկամտային հարկի աճը կազմում է 9.3% կամ 29.7 մլրդ դրամ:

Տեսակարար կշռով հաջորդը *շահութահարկն* է՝ 21.4%: Այն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 18.0%-ով կամ 44.4 մլրդ դրամով:

Բնապահպանական հարկի և քնօգտագործման վճարների գծով մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 40.1%-ով կամ 19.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի գծով մուտքերի 59.8%-ով (24.9 մլրդ դրամով) նվազմամբ:

2025 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 40.5 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կիսամյակային ծրագրային ցուցանիշից 9.9%-ով ավելի: Դրա հիմնական պատճառը լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի մուտքերի զգալի աճն է: Քանի որ այդ մուտքերի տեսակարար կշիռը պետական տուրքերում բավական բարձր է՝ 52.6%, պետական տուրքերի գծով մուտքերի գերակատարումը հիմնականում ապահովվել է դրանց՝ կիսամյակային ծրագրային ցուցանիշին 21.6%-ով գերազանցման շնորհիվ:

2025 թվականի առաջին կիսամյակում ստացվել են 3.6 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով առաջին կիսամյակում ծրագրված մուտքերի 70.6%-ը: **Թերակատարման պատճառը դարձյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականն է:**

2025թ. առաջին կիսամյակում բյուջեի այլ եկամուտները կազմել են 73.5 մլրդ դրամ՝ 56.2%-ով (26.4 մլրդ դրամով) գերազանցելով առաջին կիսամյակի ծրագրված ցուցանիշը և 41.7%-ով (21.6 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Ծրագրված ցուցանիշի գերազանցումը հիմնականում պայմանավորված է մի քանի եկամտատեսակների գծով մուտքերի բարձր կատարողականով: Մասնավորապես, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժինների գծով կատարողականը կազմել է 13.7 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 71.0 մլն դրամի դիմաց, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներին՝ 130.7% (փաստացի 18.9 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 14.5 մլրդ դրամի դիմաց), իրավախախտումների համար

կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերինը՝ 128.2% (փաստացի 13.6 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված 10.6 մլրդ դրամի դիմաց):

Ստացվող շահաբաժինների գծով բարձր կատարողականը հիմնականում պայմանավորված է «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ում պետական մասնակցության շահաբաժինների՝ համապատասխանաբար 11.2 մլրդ դրամի և 2.0 մլրդ դրամի ստացմամբ:

Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների՝ ճշտված պլանի ցուցանիշի համեմատ գերազանցումը պայմանավորված է նրանով, որ լրացուցիչ ազատ միջոցներ են կուտակվել՝ փոխանակ դրանք ծախսերին ուղղվելին: Իսկ պետական բյուջեի ծախսերը զգալիորեն թերակատարվել են: **Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականությունը, փաստացի զսպել է տնտեսության զարգացումը: Մինչդեռ հիշեցնենք, որ 2025թ. պետական բյուջեի բյուջետային ուղերձում ամրագրված է, որ 2025-2026 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսության վրա ունենալու է չեզոք ազդեցություն:**

Ուշագրավ է, որ շարունակաբար աճում են իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերը՝ այն դեպքում, երբ գործող իշխանությունները բազմիցս հայտարարում են, որ «քաղաքացին տուգանքի մատերիալ չէ»:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2025 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերը կազմել են 1,472.3 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 19.4%-ով կամ 239.6 մլրդ դրամով ավելի: Աճը հիմնականում պայմանավորված է կապիտալ ծախսերի, սոցիալական նպաստների և կենսաթոշակների աճով:

Ճշտված պլանի նկատմամբ փաստացի ծախսերի թերակատարումը զգալի է՝ 14.8% (255.0 մլրդ դրամ): Թերակատարվել են թե՛ ընթացիկ, թե՛ կապիտալ ծախսերը՝ համապատասխանաբար 11.6% և 26.6%: Թերակատարման 60.4%-ը՝ ընթացիկ ծախսերի, իսկ 39.6%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով է (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՀՀ պետական բյուջեի ծախսերը, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,232.7	1,712.5	1,727.3	1,472.3	85.2
<i>Ընթացիկ ծախսեր</i>	<i>1077.9</i>	<i>1,321.8</i>	<i>1,331.2</i>	<i>1,177.1</i>	<i>88.4</i>
<i>Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ</i>	<i>154.9</i>	<i>390.7</i>	<i>396.2</i>	<i>295.2</i>	<i>74.5</i>

Ըստ ֆինանսավորման աղբյուրների՝ պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 98.7%-ը կամ 1,453 մլրդ դրամը, որոնց կիսամյակային ծրագիրը կատարվել է 85.8%-ով: Բյուջեի ծախսերի 1.3%-ը՝ 19.5 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է կիսամյակային ծրագրի 56.8%-ը:

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերը 2025թ. առաջին կիսամյակում կազմել են 1,177.1 մլրդ դրամ՝ ճշտված պլանով նախատեսված ցուցանիշից 11.6%-ով պակաս: Թերակատարումն առավել մեծ է սոցիալական նպաստների և կենսաթոշակների և դրամաշնորհների գծով:

Ընթացիկ ծախսերը 2024-ի առաջին կիսամյակի ցուցանիշից 9.2%-ով (99.2 մլրդ դրամով) ավելի են՝ հիմնականում պայմանավորված սոցիալական նպաստների և կենսաթոշակների, «այլ ծախսերի» և տոկոսավճարների աճով՝ համապատասխանաբար 47.4, 18.1 և 15.9 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերը նվազել են 6.1%-ով կամ 2.5 մլրդ դրամով: Ի դեպ, դրանք ճշտված պլանի ցուցանիշից պակաս են 28.0%-ով կամ 15.1 մլրդ դրամով:

2024թ. առաջին կիսամյակի համեմատ կառավարության պարտքի սպասարկման ծախսերն աճել են 10.4%-ով կամ 15.9 մլրդ դրամով՝ պայմանավորված ներքին տոկոսավճարների 16.2% (17.2 մլրդ դրամ) աճով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով ծախսերի 9.8% (47.4 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարների վերադարձի՝ 41.4% (13.3 մլրդ դրամ), և կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին հատկացումների՝ 15.2% (13.2 մլրդ դրամ) աճով:

2024 թվականի առաջին կիսամյակի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների 10.7% (8.8 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է հանրակրթության ծրագրի, տնտեսության արդիականացման միջոցառմանը պետական աջակցության, գյուղատնտեսության արդիականացման և բնակարանների ու անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների իրականացման միջոցառմանը պետական աջակցության ծախսերի աճով:

Այս անգամ էլ (ինչպես նախորդ մի քանի հաշվետու ժամանակահատվածներում) թերակատարումն առկա է ընթացիկ ծախսերի բոլոր բաղադրիչների գծով: Առավել զգալի են «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում», «այլ ծախսեր» և «դրամաշնորհներ» հոդվածների գծով ծախսերի թերակատարումները՝ ճշտված պլանի համեմատ համապատասխանաբար 28.0%-ով, 18.4%-ով և 16.7%-ով:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	1,232.7	1,712.5	1,727.3	1,472.3	85.2
Ընթացիկ ծախսեր	1,077.9	1,321.8	1,331.2	1,177.1	88.4
Աշխատանքի վարձավորություն	103.4	120.1	118.9	108.9	91.6
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	41.3	51.7	53.9	38.8	72.0
Տոկոսավճարներ	153.5	190.2	189.8	169.4	89.2
Սուբսիդիաներ	82.0	93.2	93.8	90.8	96.8
Դրամաշնորհներ	127.0	158.1	159.8	133.2	83.3
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	483.1	578.9	585.5	530.5	90.6
Այլ ծախսեր	87.5	129.6	129.4	105.6	81.6
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	154.9	390.7	396.2	295.2	74.5
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	163.7	397.5	402.9	295.8	73.4
Շենքեր և շինություններ	149.7	369.9	370.0	283.6	76.6
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	12.2	18.4	23.6	10.6	45.0

Այլ հիմնական միջոցներ	1.8	9.1	9.4	1.6	17.6
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(8.9)	(6.8)	(6.8)	(0.6)	9.1

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը 2024-ի առաջին կիսամյակի համեմատ 90.6%-ով աճել է՝ կազմելով 295.2 մլրդ դրամ: Այս ցուցանիշի հիմնական մասը կազմող կապիտալ ծախսերն աճել են 80.7%-ով (132.1 մլրդ դրամով)՝ պայմանավորված ներքին ռեսուրսների հաշվին իրականացված ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի կրկնակի (137.6 մլրդ դրամ) աճով: **Այնուամենայնիվ, ճշտված պլանի նկատմամբ էականորեն թերակատարվել են թե՛ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները և թե՛ կապիտալ ծախսերը՝ համապատասխանաբար 25.5%-ով կամ 101.0 մլրդ դրամով և 26.6%-ով կամ 107.1 մլրդ դրամով: Ընդ որում, կապիտալ ծախսերի դեպքում ևս թերակատարվել են բոլոր բաղադրիչները:**

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

2025 թվականի պետական բյուջեով առաջին կիսամյակում նախատեսված էր 170, իսկ ճշտված ծրագրով՝ 173 ծրագրերի իրականացում՝ 47 պետական մարմինների և կառավարության պատասխանատվության ներքո: Փաստացի միջոցներ օգտագործվել են դրանցից 168-ի գծով:

Ծրագրերի շրջանակներում առաջին կիսամյակում նախատեսված միջոցառումների թիվը 860 է (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 3 միջոցառումների): Դրանցից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 768-ը կամ 89.3%-ը:

Առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի թերակատարման (255.0 մլրդ դրամ) զգալի մասը պայմանավորված է ՀՀ պաշտպանության (54.4 մլրդ դրամ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (46.1 մլրդ դրամ), ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (38.3 մլրդ դրամ) և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (26.7 մլրդ դրամ) նախարարությունների պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում արձանագրված շեղումներով:

Իրենց պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով տոկոսային արտահայտությամբ առավել զգալի (20 տոկոսից ավելի) թերակատարում ունեցող պատասխանատու մարմիններն են՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (թերակատարումը՝ 72.8%), քաղաքաշինության կոմիտեն (թերակատարումը՝ 58.7%), շրջակա միջավայրի նախարարությունը (թերակատարումը՝ 34.3%), արտաքին հետախուզության ծառայությունը (թերակատարումը՝ 32.4%), տարածքային կառավարման և

**ենթակառուցվածքների նախարարությունը (թերակատարումը՝ 22.8%),
էկոնոմիկայի նախարարությունը (թերակատարումը՝ 22.3%) և ԿԳՄՍ
նախարարությունը (թերակատարումը՝ 20.9%):**

Հարկ է նշել, որ ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք
ծրագրերի կատարողականը շարունակում է մնալ խիստ ցածր (Աղյուսակ 5):
Դրանցից շատերի կատարողականը չի հասնում նույնիսկ 50%-ի:

**Աղյուսակ 5. 2025թ. առաջին կիսամյակում իրականացված որոշ ծրագրերի
շրջանակներում կատարված ծախսերը, մլն դրամ**

N	Ծրագիր	Պատասխանատու	2025թ. առաջին կիսամ- յակի պլան	2025թ. առաջին կիսամ- յակի ճշտված պլան	2025թ. առաջին կիսամ- յակի փաս- տացի	Կատա- րողա- կանը ճշտված պլանի նկատ- մամբ, %
1.	Առողջապահության ոլորտում պետական քաղաքականու- թյան մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտո- րինգ	Առողջապահու- թյան նախարարություն	4,657.4	4,728.7	1,780.0	37.6
2.	Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում	Բարձր տեխնոլո- գիական արդյու- նաբերության նախարարություն	2,024.2	2,006.3	94.5	4.7
3.	Թվային փոխակերպման գործընթացի իրականացում		3,084.2	2,344.1	173.5	7.4
4.	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիր		14,012.7	14,093.5	4,114.6	29.2
5.	Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	Էկոնոմիկայի նախարարություն	12,611.7	1,777.1	223.3	12.6
6.	Զբոսաշրջության զարգացման ծրագիր		3,583.1	3,583.1	910.5	25.4
7.	Հանրակրթական և նախա- դպրոցական հաստատու- թյունների հիմնում, կառու- ցում, բարելավում	ԿԳՄՍ նախարարություն	47,017.7	52,358.2	29,198.0	55.8
8.	Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք- ների նախարարու- թյուն	3,684.5	3,366.1	1,599.9	47.5
9.	Քաղաքային զարգացում		7,817.8	7,850.0	2,206.9	28.1
10.	Ոռոգման համակարգի առողջացում		11,675.7	11,679.1	5,438.6	46.6

**Ծրագրերից մի քանիսը ցածր կատարողական ունեցող ծրագրերի
ցանկում ընդգրկված են արդեն մի քանի հաշվետու ժամանակահատված
շարունակ: Ավելին, դրանցից մի քանիսի ռազմավարական կարևորությունն
անժխտելի է: Մասնավորապես, ՀՀ բարձր տեխնոլոգիական**

արդյունաբերության նախարարության պատասխանատվության ներքո իրականացվող «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացման ծրագրի» շրջանակներում 2025թ. առաջին կիսամյակում օգտագործվել է 94.5 մլն դրամ կամ նախատեսված միջոցների ընդամենը 4.7%-ը: Ի դեպ, այս ծրագրի գծով չափազանց մեծ թերակատարումները միայն այս հաշվետու ժամանակահատվածին չեն բնորոշ: Խիստ ցածր է նաև նույն նախարարության «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» ծրագրի կատարողականը՝ 7.4%: ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի» գծով կատարողականը 12.6% է:

Այս հաշվետու ժամանակահատվածում ևս փորձ է արվում ծրագրերի իրականացման թերակատարումները առավելապես բացատրել տարբեր «օբյեկտիվ» հանգամանքներով՝ հաստիքների թերհամալրում, գնման գործընթացի հետ կապված խնդիրներ, դոնորների հետ ընթացակարգային խնդիրներ և այլն: Հաշվի առնելով բոլոր հաշվետու ժամանակահատվածներում արձանագրվող նշված խնդրի առկայությունը, պետք է փաստենք, որ այն միանշանակ բնորոշում է գործող կառավարության անարդյունավետ կառավարման մակարդակը:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2025 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 39.2 մլրդ դրամ պակասուրդով՝ ծրագրված 325.3 մլրդ դրամ պակասուրդից շուրջ 8.3 անգամ պակաս: Այսինքն՝ բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 286.1 մլրդ դրամով: Պլանավորվածից պակաս պակասուրդը պայմանավորված է եկամուտների գերակատարմամբ և ծախսերի ցածր կատարողականով, որը հանգեցրել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների աճի:

Ուշագրավ է, որ ճշտման արդյունքում բյուջեի պակասուրդի հաստատված ցուցանիշը 315.9 մլրդ դրամից բարձրացվել էր 325.3 մլրդ դրամի, մինչդեռ փաստացի պակասուրդը հաստատված բյուջեի ցուցանիշից անգամներով ցածր է եղել: Սա ևս վկայում է այն մասին, որ կառավարության՝ բյուջետային պլանավորման ոլորտում առկա խնդիրները շարունակում են խիստ արդիական մնալ:

Համաձայն հաշվետվության՝ 2025թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բյուջեի հաշվեկշռի նվազման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է զսպող: Համախառն

պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2025թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է -1.7 զսպող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների -1.6 զսպող և ծախսերի -0.1 չափի չեզոք ազդեցություններով:

Աղյուսակ 6. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2024թ.	2025թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	(11.0)	315.9	325.3	39.2	12.1
Պակասուրդի ֆինանսավորումը՝					
Ա. Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	46.2	232.6	224.4	(54.5)	(24.3)
1. Փոխառու զույր միջոցներ	128.4	36.0	36.0	102.7	285.5
2. Ֆինանսական զույր ակտիվներ	(82.2)	196.6	188.4	(157.2)	(83.4)
Բ. Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	(57.2)	83.3	100.9	93.7	92.9
1. Փոխառու զույր միջոցներ	(52.2)	85.3	102.8	90.0	87.5
2. Ֆինանսական զույր ակտիվներ	(5.0)	(2.0)	(1.8)	3.8	(205.1)

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրներից փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումն ապահովվել է գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտքերի հաշվին: Դրանք 2025թ. առաջին կիսամյակում կազմել են 102.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 20.0%-ով պակաս:

2025թ. առաջին կիսամյակի ընթացքում ներքին աղբյուրներից ֆինանսական զուտ ակտիվների հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է -157.2 մլրդ դրամ՝ ծրագրված 188.4 մլրդ դրամի դիմաց, որը հիմնականում պայմանավորված է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների՝ նախատեսված 213.6 մլրդ դրամ օգտագործման փոխարեն 149.5 մլրդ դրամ աճով:

Հաշվետու ժամանակահատվածում արտաքին աղբյուրներից փոխառու զուտ միջոցների հաշվին ֆինանսավորումը կազմել է 90.0 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է արտարժույթային պարտատոմսերի թողարկման հաշվին:

Նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում 2025թ. առաջին կիսամյակում ստացվել են 14.4 մլրդ դրամ վարկային միջոցներ՝ ծրագրված ցուցանիշի 37.1%-ը՝ պայմանավորված ծրագրերի քրոնիկ դարձած ցածր կատարողականով: Նշված միջոցների զգալի մասը տրամադրվել է ԵԶԲ և ԱԶԲ կողմից:

2025թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 5,324 մլրդ դրամ (13,852 մլն ԱՄՆ դոլար): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ ՀՀ պետական պարտքի ցուցանիշները մեկ տարվա ընթացքում աճել են համապատասխանաբար 12.8 և 13.9%-ով: Կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ աճել է 14.5%-ով կամ 1.7 մլրդ ԱՄՆ դոլարով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 13.4%-ով կամ 606.4 մլրդ դրամով: ՀՀ պետական պարտքում 2,668 մլրդ դրամը (6,943 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,655 մլրդ դրամը (6,909 մլն ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով արձանագրենք.

- ՀՀ տնտեսական ակտիվությունը տարեսկզբի զգալի դանդաղումից հետո մարտ ամսից սկսել է կրկին արագանալ՝ հիմնականում պայմանավորված մի կողմից՝ արդյունաբերության անկման տեմպի մեղմմամբ՝ բազայի էֆեկտի հաշվին, մյուս կողմից՝ այնպիսի «ոչ արտահանելի» ճյուղերի աճով, ինչպիսիք են ծառայություններն ու շինարարությունը: **Տնտեսական ակտիվության աճին արդյունաբերության ճյուղի նպաստումը բացասական է՝ -2.1 տոկոսային կետ, նախորդ տարվա վեց ամիսների համեմատ արդյունաբերության ճյուղում գրանցվել է թողարկման էական՝ 12.1%, նվազում:**

Արդյունաբերության նվազումն առավելապես մշակող արդյունաբերության անկման պատճառով է, որն իր հերթին հիմնականում պայմանավորված է թանկարժեք մետաղների վերաարտահանման գործոնի չեզոքացմամբ: Ի դեպ, գործող իշխանությունները ոսկու վերաարտահանման պիկի ժամանակ գովերգում էին այդ երևույթը և հիմնավորում, որ դա ոչ թե ոսկու պարզ վերաարտահանում է, այլ իրականում հումքը ներմուծվում է ՀՀ, անցնում վերամշակում և հետո միայն որպես պատրաստի արտադրանք արտահանվում՝ զգալիորեն նպաստելով տնտեսական ակտիվության աճին: Այժմ արդեն ընդհակառակը՝ նրանք նույն ջերմեռանդությամբ փորձում են ապացուցել, որ ոսկու վերաարտահանմամբ ստեղծած արդյունքը զրոյի էր ձգտում և գրեթե չէր նպաստում տնտեսական ակտիվության աճին, ավելին՝ այն անգամ ռիսկեր էր ստեղծում պետության ու բիզնես միջավայրի համար:

Հարկ է ընդգծել, որ ոսկու վերաարտահանման գործոնի չեզոքացումը մշակող արդյունաբերության նվազման միակ պատճառը չէ: Էական նվազում է արձանագրվել նաև այնպիսի կարևորագույն ենթաոլորտներում, ինչպիսիք են «խմիչքների արտադրությունը», «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը» և «հագուստի արտադրությունը»:

2025թ. առաջին կիսամյակում խոր անկման մակարդակում են գտնվում թե՛ արտահանման և թե՛ ներմուծման ցուցանիշները:

- 2025 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1,433.1 մլրդ դրամ:

Պաշտոնական դրամաշնորհները ճշտված պլանի ցուցանիշից 29.4%-ով պակաս են: **Թերակատարման պատճառը դարձյալ նպատակային դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականն է:**

2025թ. առաջին կիսամյակում բյուջեի այլ եկամուտներն էապես գերազանցել են թե՛ առաջին կիսամյակի համար ծրագրված և թե՛ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշներին՝ պայմանավորված մի քանի եկամտատեսակների գծով մուտքերի զգալի աճով, ինչը դրանց որոշ մասի դեպքում մտորումների տեղիք է տալիս: Մասնավորապես, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների աճը հիմնականում պայմանավորված է եղել նրանով, որ **լրացուցիչ ազատ միջոցներ են կուտակվել՝ փոխանակ դրանք ծախսերին ուղղվելին:** Իսկ պետական բյուջեի ծախսերը զգալիորեն թերակատարվել են: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականությունը, փաստացի զսպել է տնտեսության զարգացումը: Մինչդեռ, համաձայն 2025թ. պետական բյուջեի բյուջետային ուղերձի՝ 2025-2026 թվականներին հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսության վրա ունենալու է չեզոք ազդեցություն:

Ինչ վերաբերում է իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից ստացվող մուտքերին, դրանք շարունակաբար աճում են՝ այն դեպքում, երբ գործող իշխանությունները բազմիցս հայտարարում են, որ «քաղաքացին տուգանքի մատերիալ չէ»:

- 2025 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերի փաստացի մեծությունը 1,472.3 մլրդ դրամ է՝ ճշտված պլանի ցուցանիշից 14.8%-ով (255.0 մլրդ դրամով) պակաս: Թերակատարվել են թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերը:

Որոշ պատասխանատու մարմինների պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով թերակատարումը բավական մեծ է: Օրինակ՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության դեպքում ծախսերի թերակատարումը 72.8% է, քաղաքաշինության կոմիտեի դեպքում՝ 58.7%, շրջակա միջավայրի նախարարության դեպքում՝ 34.3%, արտաքին հետախուզության ծառայության դեպքում՝ 32.4%, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության դեպքում՝ 22.8%, էկոնոմիկայի նախարարության դեպքում՝ 22.3%, ԿԳՄՍ նախարարության դեպքում՝ 20.9%:

Ծրագրերի կատարողականների պատկերը բավական մտահոգիչ է: Մասնավորապես, կենսական նշանակություն ունեցող մի շարք ծրագրեր նույնիսկ ծրագրվածի կիսով չափ չեն կատարվել: Ավելին, դրանցից շատերի գծով արդեն մի քանի հաշվետու ժամանակահատված շարունակ խիստ ցածր կատարողական է գրանցվում: Օրինակ՝ այնպիսի կարևորագույն ծրագրի կատարողականը, ինչպիսին է բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատասխանատվության ներքո իրականացվող «Ռազմարդյունաբերության համալիրի զարգացման ծրագիրը», ընդամենը 4.7% է: Նույն նախարարության «Թվային փոխակերպման գործընթացի իրականացում» ծրագիրը ևս աչքի է ընկնում չափազանց ցածր կատարողականով՝ 7.4%: Էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի» կատարողականը նույնպես ծայրահեղ մտահոգիչ է՝ 12.6%: Այս փաստերը խոսում են գործող կառավարության ոչ բավարար մակարդակի կառավարման մասին:

- 2025 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեն ունեցել է 39.2 մլրդ դրամ պակասուրդ, որը շուրջ 8.3 անգամ պակաս է ճշտված պլանով ծրագրված պակասուրդից: Այսինքն՝ բյուջեի կատարումն այս անգամ ևս էապես (շուրջ 286.1 մլրդ դրամով) շեղվել է պլանից: Պլանավորվածից պակաս պակասուրդը հիմնականում պայմանավորված է եկամուտների գերակատարմամբ և ծախսերի ցածր կատարողականով, որը հանգեցրել է ֆինանսավորման ներքին աղբյուրներում բյուջեի ազատ միջոցների աճի:

Ի դեպ, բյուջեի պակասուրդի հաստատված ցուցանիշը 315.9 մլրդ դրամից ճշտման արդյունքում բարձրացվել էր 325.3 մլրդ դրամի, մինչդեռ փաստացի պակասուրդը հաստատված ցուցանիշից անգամներով ցածր է եղել: Սա կրկին անգամ հաստատում է այն մտահոգությունը, որ բյուջետային պլանավորման ոլորտում կառավարության խնդիրները պահպանվում են:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան *ակտիվ հղման* տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: